ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻԱՎՈՐԻ ԾՐԱԳՐԻ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

Բովանդակություն

Ներածություն Հիմնական Միավորի Ծրագիր	2
Հիմնական Միավորի Ծրագրի հինգ տարրերը	3
1. Կառուցվածք	3
2. Հավաքման վայրեր	4
3. Ծրագիր	5
4. Ուսուցանում	6
5. Գրառումներ և հաշվետվություններ	6
Սկզբունքներ և զգուշացումներ	7
Կիրակնօրյա ժողովների ժամացուցակներ	8

Բաշխում

Հիմնական Միավորի Ծրագրի Ուղեցույցը քահանայության ղեկավարներին ցուցումներ է տրամադրում՝ կազմակերպելու համար միավորները այն վայրերում, որտեղ Եկեղեցին գտնվում է իր կազմավորման վաղ շրջանում, որտեղ անդամները ցրված են կամ թվով փոքր են, որտեղ ղեկավարությունը նոր է սկսում ձևավորվել, կամ որտեղ անդամները լեզվական կամ հատուկ այլ կարիքներ ունեն: Թեպետև այս պայմանները, հիմնականում, հանդիպում են միսիաներում, Տարածքի Նախագահության համաձայնությամբ Հիմնական Միավորի Ծրագիրը կարող է օգտագործվել նաև միանման պայմաններում գտնվող ցցերում:

Հրատարակված է
Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու կողմից
Սոլթ Լեյք Սիթի, Յուտա

©2002 by Intellectual Reserve, Inc.
Բոլոր իրավունքները պաշտպանված են

Printed in Germany

English approval: 2/02
Translation approval: 2/02
Armenian

Ներածություն Հիմնական Միավորի Ծրագիր

«Մենք հավատում ենք նույն կազմակերպությանը, որ գոյություն է ունեցել սկզբնական Եկեղեցում» (Հավատո Հանգանակներ 1.6):

Իր մահկանացու ծառայության ժամանակ Տեր Հիսուս Քրիստոսը հավատացյալների մեջ հիմնեց Իր Եկեղեցին պարզ ձևով: Իր Առաքյալների միջոցով Նա կազմակերպեց անդամների փոքր խմբեր, որոնց ծառայում էր քահանայության նախագահող ղեկավարը:

Եկեղեցու առաջին անդամները կարողացան աճել և բարգավաճել ավետարանում, որովհետև Քրիստոսը և Նրա Առաքյալները.

1. Կենտրոնանում էին ավետարանի սկզբունքներն ու վարդապետություններն ուսուցանելու վրա:
2. Անդամներին խրախուսում էին ստանալ օրհնություններ և կապել ու պահել համապատասխան ուխտերը:
3. Սովորեցնում էին անդամներին ծառայել միմյանց՝ հոգալով հոգևոր և նյութական կարիքները:
4. Կառուցվածքը պարզ էին պահում:

Կառուցվածքային և կազմակերպչական նույն սկզբունքները կիրառվում էին Եկեղեցու ղեկավարների կողմից Մորմոնի Գրքում: «Եվ այսպես, Ալման ու Ամուղեկը գնացին առաջ, և նաև շատ շատերը, ովքեր ընտրված էին աշխատանքի համար, քարոզելու խոսքը ողջ երկրով մեկ: Եվ եկեղեցու հաստատումը դարձավ համընդհանուր երկրով մեկ» (Ալմա 16.15):

Նույն սկզբունքները կիրառվում էին նաև Եկեղեցու վերականգնման վաղ տարիներին: Այսօր Եկեղեցու անդամներն առավել լավ ծառայություն են ստանում, երբ հետևում են կառուցվածքային և կազմակերպչական նույն սկզբունքներին:

Տարածքի Նախագահության լիազորությամբ Հիմնական Միավորի Ծրագիրը կարող է օգտագործվել՝ հիմնելու և կազմակերպելու Եկեղեցին աշխարհի այն վայրերում, որտեղ.

1. Եկեղեցին գտնվում է իր կազմավորման վաղ շրջանում:
2. Անդամները ցրված են:
3. Անդամների թիվը փոքր է և ղեկավարությունը նոր է սկսում զարգանալ:
4. Ծխերը և ցցերը դեռ կազմավորված չեն:
5. Անդամները լեզվական կամ հատուկ այլ կարիքներ ունեն:

Տարածքի Նախագահության համաձայնությամբ Հիմնական Միավորի Ծրագիրը կարող է օգտագործվել նաև միանման պայմաններում գտնվող ցցերում:

Այս պայմաններում Եկեղեցու կազմավորման ժամանակ անդամները հավաքվում են փոքր խմբերում, որոնք կոչվում են ճյուղեր:

Հիմնական Միավորի Ծրագրի ուղեցույցները տրվում են այս հրատարակության մեջ, ինչպես նաև *Ընտանիքի Ուղեցույց* (համար 31180), *Ճյուղի Ուղեցույց* (31179), *Քահանայության և Օժանդակ Կազմակերպությունների Ղեկավարների Ուղեցույց* (31178) և *Ուսուցման Ուղեցույց* (34595) գրքերում: Երբ միավորները ամբողջովին կազմավորված են որպես ցցեր և ծխեր, պետք է օգտագործվի նաև *Հրահանգների Եկեղեցու Ժողովածու* (35205 և 35209) գիրքը:

Հիմնական Միավորի Ծրագրի հինգ տարրերը

« Եվ արդ, ահա, ես ասում եմ քեզ, որ դու պետք է գնաս … և քարոզես նրանց իմ ավետարանը. և որքանով որ նրանք ընդունեն քո ուսմունքները, դու պետք է այնպես անես, որ իմ եկեղեցին նրանց մեջ հաստատվի» (Վարդապետություն և Ուխտեր 28.8; տես նաև 33.5–6):

1. Կառուցվածք

Ընտանիք

Ընտանիքը Եկեղեցու հիմնական միավորն է: Տանն ըստ ավետարանի ապրելու և ընտանիքի վերաբերյալ հրահանգներ դուք կարող եք գտնել *Ընտանիքի Ուղեցույցում:*

Ճյուղ

Երբ տարածքում առկա են մեկից ավելի ընտանիքներ և երբ առնվազն մեկ անդամ Ահարոնյան կամ Մելքիսեդեկյան Քահանայության արժանի կրող է, ապա կարող է հիմնվել ճյուղ: Ճյուղի կառուցվածքը սկզբում կարող է պարզ լինել՝ մեկ նախագահ, որը հսկում է անդամներին, այցելելով նրանց տներում և աջակցելով իրենց պարտականությունները կատարելիս: Այդ պայմաններում, ճյուղն անց է կացնում միայն հաղորդության ժողով և ավետարանի ուսուցման ժամ, որի ընթացքում օգտագործվում են սուրբ գրությունները և *Ավետարանի Սկզբունքներ* (31110) կամ *Ավետարանի Հիմունքներ* (31129) ձեռնարկները: Տես Ժամացուցակ Ա, էջ 8:

Ճյուղի անդամների և ղեկավարների թվի աճի հետ մեկտեղ պետք է կազմավորվի երեցների քվորումը: Այդ ժամանակ ճյուղի նախագահը կարող է օգտագործել քահանայություն կրողներին, որոնք կհսկեն անդամներին տնային ուսուցման միջոցով: Ավետարանի կիրակնօրյա ուսուցման ժամանակ պետք է անցկացվի քահանայության, ինչպես նաև՝ կանանց, երիտասարդ կանանց և երեխաների միացյալ ժողով: Տես Ժամացուցակ Ա, էջ 8:

Երբ անդամների և ղեկավարների թիվը շարունակում է աճել և ժողովներ անցկացնելու տարածքները առկա են, կարող են կազմավորվել Ահարոնյան Քահանայության քվորումները, Սփոփող Միությունը, Երեխաների Միությունը, Երիտասարդ Կանանց Միությունը և Կիրակնօրյա Դպրոցը: Ավետարանի կիրակնօրյա ուսուցման դասերը անց են կացվում ըստ Ժամացուցակներ Բ և Գ-ի, էջ 8:

Որպես ամփոփում, ծրագիրը սկսվում է անձից կամ ընտանիքից: Այնուհետև կազմավորվում է ճյուղը: Հետագայում, երբ ամրանում է քահանայությունը և ավելանում է անդամների թիվը, կարող են կազմավորվել քահանայության քվորումները և օժանդակ կազմակերպությունները:

Ճյուղ հիմնելու, կազմակերպելու և ղեկավարելու վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկություններ կարող եք գտնել *Ճյուղի Ուղեցույցում* և *Քահանայության և Օժանդակ Կազմակերպությունների Ղեկավարների Ուղեցույցում:*

2. Հավաքման վայրեր

Ինչպես բացատրվում է *Ընտանիքի Ուղեցույց-ում* ընտանեկան երեկոները անց են կացվում ադնամների տներում:

Ճյուղի ժողովները անց են կացվում տանը, վարձակալված շենքում կամ Եկեղեցու սեփականություն հանդիսացող շենքում: Ինչպես բացատրվում է *Ճյուղի Ուղեցույցում,* միսիայի նախագահությունը կարող է տեղեկություններ տրամադրել ճյուղի համար ժողովատուն ձեռք բերելու և պահպանելու վերաբերյալ:

Ճյուղի ժողովները անց են կացվում տանը, վարձակալված շենքում կամ Եկեղեցու սեփականություն հանդիսացող շենքում:

3. Ծրագիր

Եկեղեցին նյութեր է հրատարակում Հիսուս Քրիստոսի ավետարանը տանը և Եկեղեցու միավորներում ուսուցանելու համար: Այդ նյութերը հիմնված են սուրբ գրությունների և վերջին օրերի մարգարեների ուսմունքների վրա: Դրանք անդամներին օգնում են սովորել ավետարանը և ապրել ըստ դրա: Դրանք նաև անդամների համար ուղեցույցներ են հանդիսանում սուրբ գրությունների և վերջին օրերի առաքյալների և մարգարեների խոսքերը ուսումնասիրելու ընթացքում:

Տվյալ լեզվով մատչելի առաջին նյութերն են՝ *Ավետարանի Սկզբունքները* (կամ *Ավետարանի Հիմունքները*), *Առաջին Նախագահության Ուղերձները և Այցելող Ուսուցիչների Ուղերձները:* Եկեղեցու աճի հետ մեկտեղ մատչելի են դառնում սուրբ գրությունները, ծրագրի այլ նյութերը և Եկեղեցու ամսագրերը:

Երբ ճյուղն այնքան է աճում, որ սկսվում են անցկացվել քահանայության և օժանդակ կազմակերպությունների դասերը, կարող են օգտագործվել հետևյալ նյութերը.

Մելքիսեդեկյան Քահանայություն և Ահարոնյան Քահանայություն	*Քահանայության Օրհնությունները և Պարտականությունները, Մաս Ա* *Քահանայության Օրհնությունները և Պարտականությունները, Մաս Բ*
Սփոփող Միություն և Երիտասարդ Կանանց Միություն	*Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Կինը, Մաս Ա* *Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Կինը, Մաս Բ*
Երեխաների Միություն	*Երեխաների Միություն 3 . Ընտրիր Ճիշտը Բ* *Երեխաների Միություն 4. Մորմոնի Գիրքը*
Կիրակնօրյա Դպրոց	*Ավետարանի Սկզբունքները* *(կամ Ավետարանի Հիմունքները)*
Անհրաժեշտության դեպքում, ի լրումն վերը նշված նյութերի, կարող են օգտագործվել սուրբ գրությունները, *Ընտանիքի Ուղեցույց, Քահանայության և Օժանդակ Կազմակերպությունների Ղեկավարների Ուղեցույց, Ուսուցման Ուղեցույց* գրքերը, *Առաջին Նախագահության Ուղերձները, Այցելող Ուսուցիչների Ուղերձները* և *Օրհներգեր և Երեխաների Երգեր* գիրքը:	

Ամբողջ աշխարհում ծրագիրը սկսվում է հունվարի 1-ին: Երբ ճյուղը կազմավորվում է, ամեն տարի տրամադրվում են հրահանգների հետ միասին համապատասխան նյութերը:

4. Ուսուցում

Ավետարանի ուսուցումը տանը և Եկեղեցու ժողովների ժամանակ էական դեր է խաղում հոգևոր աճի և անձնական վկայությունն ամրացնելու գործում: Եկեղեցու բոլոր անդամները ուսուցիչներ են, լինեն նրանք ծնողներ, ղեկավարներ, թե՝ դասարանների ուսուցիչներ, տնային կամ այցելող ուսուցիչներ:

Տունը պետք է լինի ավետարանն ուսուցանելու հիմնական վայրը: Տան ուսուցումը հիմնվում է այն ուսուցանման և ուսումնասիրության վրա, որն անցկացվում է Եկեղեցու ժողովների ժամանակ:

Տերն ասել է. «Եվ ես ձեզ տալիս եմ պատվիրան, որ դուք պետք է մեկմեկու ուսուցանեք արքայության վարդապետությունը: Ուսուցանեք ջանասիրաբար, և իմ շնորհը կայցելի ձեզ, որպեսզի դուք ավելի կատարյալ ձևով հրահանգվեք ավետարանի տեսության, սկզբունքի, վարդապետության և օրենքի մեջ, բոլոր բաներում, որոնք պատկանում են Աստծո արքայությանը, որոնք նպատակահարմար է, որ դուք հասկանաք» (ՎԵՈՒ 88.77–78):

Ուսուցման Ուղեցույցում դուք կարող եք գտնել այն սկզբունքները, որոնք կօգնեն ձեզ սովորեցնել ավետարանը պարզ, գեղեցիկ և արդյունավետ ձևով:

5. Գրառումներ և հաշվետվություններ

Տերը Եկեղեցուն պատվիրել է գրառումներ վարել: Ճյուղում վարում են չորս տեսակի գրառումներ. ֆինանսական, անդամության, տարեգրային և անդամների առաջընթացի գրառումները:

Գրառումներ վարելու վերաբերյալ նյութերը տրամադրվում են ճյուղի կազմավորման ժամանակ: Գրառումները վարելու, հաշվետվությունները լրացնելու և ներկայացնելու վերաբերյալ հրահանգները տրամադրվում են միսիայի նախագահի ղեկավարությամբ: Սրբազան այս փաստաթղթերի համար պատասխանատու անձիք պետք է զգուշորեն պահպանեն Եկեղեցու գրառումներում պարունակվող տեղեկությունների գաղտնիությունը:

Եկեղեցու գրառումների և հաշվետվությունների վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկություններ կարող եք գտնել *Ճյուղի Ուղեցույցում:*

Սկզբունքներ և զգուշացումներ

«Եվ տեսեք, որ բոլոր այս բաներն արվեն իմաստությամբ և կարգով. մանզի հարկավոր չէ, որ մարդ վազի ավելի արագ, քան ինքն ուժ ունի» (Մոսիա 4.27):

Հետևյալ սկզբունքները և զգուշացումները կարևոր են Հիմնական Միավորի Ծրագրի արդյունավետության համար.

1. Փնտրեք Սուրբ Հոգու ներշնչումը ձեր բոլոր գործերում: Սուրբ Հոգին կառաջնորդի ծնողներին, ճյուղերի ղեկավարներին և ուսուցիչներին և կօգնի իմանալ, թե ինչ անել և ինչպես դա անել: Խոնարհությամբ և անկեղծորեն աղոթեք Նրա առաջնորդության համար: Լրջորեն խորհեք ձեզ հետաքրքրող հարցի շուրջ, ջանասիրաբար աղոթեք, որոշեք, թե ինչ քայլեր պետք է ձեռնարկել և Սուրբ Հոգուց հաստատում ստացեք այն մասին, արդյոք ձեր որոշումը ճիշտ է: Նա հասկացողություն կպարգևի ձեր մտքին և սրտին, բացահայտելով գիտելիքն այն մասին, թե ինչ դուք պետք է անեք:

Եղեք խոնարհ, և Տերը, ձեր Աստվածը, կառաջնորդի ձեզ և կտա ձեզ ձեր աղոթքների պատասխանը (տես ՎԿՈ 112.10):

«Այո՛, ահա, ես կասեմ քեզ քո մտքում և քո սրտում, Սուրբ Հոգով, որը կգա քո վրա և, որը կմնա քո սրտում: Արդ, ահա, սա է հայտնության ոգին» (ՎԿՈ 8.2–3):

2. Ուսուցանեք ավետարանի հիմնական սկզբունքները և վարդապետությունը: Կարդացեք Մոսիա 18.18-30: Նշեք, թե ինչպես էին հիմնական սկզբունքները և վարդապետությունն ուսուցանվում Ալմայի ժամանակներում:

3. Կենտրոնացեք ծեսերի և ուխտերի վրա: Անդամներին օգնեք (1) հասկանալ և ստանալ քահանայության հիմնական ծեսերը և (2) կապել ու պահել համապատասխան ուխտերը:

4. Սկզբում հիմնեք քահանայությունը և քահանայության ֆունկցիաները: Դա հիմնեք Սփոփող Միությունը, Երեխաների Միությունը, Երիտասարդ Կանանց Միությունը կամ Կիրակնօրյա Դպրոցը կազմավորելուց առաջ: Մի շտապեք: Քահանայության ղեկավարությունը առավել լավ է ձևավորվում, երբ Եկեղեցու միջոցները անդամների կարիքների հետ պատշաճ ձևով հավասարակշռված են լինում: Ղեկավարությունը թուլանում է, երբ ճյուղերը սկսում են չափից դուրս արագ մեծացնել իրենց կառուցվածքը, ավելացնելով կազմակերպությունները, ժողովները և ծրագրերը:

Կիրակնօրյա ժողովների Ժամացուցակները

Միսիայի նախագահները ժողովների ժամացուցակների օգտագործումը պետք է համաձայնեցնեն Տարածքի Նախագահության հետ:

Կիրակնօրյա ժողով, Ժամացուցակ Ա

Այն ճյուղերի համար, որտեղ ճյուղի նախագահը Մելքիսեդեկյան Քահանայության միակ կրողն է կամ որտեղ նա Ահարոնյան Քահանայության քահանա է: (Երբ երեցների քվորումի նախագահ է կանչվում, ավետարանի ուսուցման ժամը փոխվում է հետևյալ կերպ. քահանայության բոլոր կրողները հանդիպում են միասին, իսկ կանայք, երիտասարդ կանայք և երեխաները հանդիպում են միասին:)

Հաղորդության ժողով
Ավետարանի ուսուցման ժողով մեծահասակների, երիտասարդների և երեխաների համար

Կիրակնօրյա ժողով, Ժամացուցակ Բ

Այն ճյուղերի համար, որտեղ անդամների թիվը բավարար է քահանայության քվորումների և օժանդակ կազմակերպությունների որոշ մասի կազմավորումը սկսելու համար:

Հաղորդության ժողով		
Կիրակնօրյա դպրոց (12 տարեկան և բարձր տարիքի երիտասարդներ և մեծահասակներ)		Երեխաների Միություն (3–11 տարեկան երեխաներ)
Քահանայության ժողով	Սփոփող Միության և Երիտասարդ Կանանց Միության ժողով	

Կիրակնօրյա ժողով, ժամացուցակ Գ

Այն ճյուղերի համար, որտեղ անդամների թիվը բավարար է քահանայության քվորումների և օժանդակ կազմակերպությունների հիմնական մասը կամ ամբողջությամբ կազմավորելու համար, և որտեղ բավականացնում են ղեկավարների թիվը և ժողովներ անցկացնելու վայրերը:

Հաղորդության ժողով				
Կիրակնօրյա դպրոց (12 տարեկան և բարձր տարիքի երիտասարդներ և մեծահասակներ)				Երեխաների Միություն (3-11տարեկան երեխաներ)
Բացիչ մաս		Բացիչ մաս	Բացիչ մաս	
Մելքիսեդեկյան Քահանայություն	Ահարոնյան Քահանայություն	Սփոփող Միություն	Երիտասարդ Կանանց Միություն	

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

ARMENIAN
4 02367 17201 5
36717 201